

Հաստատված է «Նորավանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի  
մանկավարժական խորհրդի 31.08.2023թ.

2-րդ նիստի 2-րդ որոշմամբ  
Տնօրեն **Վ. Առաքելյան**



ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ  
ՆՈՐԱՎԱՆԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ  
2023-24 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ  
ՆԵՐԴՊՐՈՑԱԿԱՆ  
ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ  
ՊԼԱՆ

2023թ.

## ՆԵՐԴՊՐՈՑԱԿԱՆ ՎԵՐԱՀՄԿՈՂՈՒԹՅՈՒՆ

Ներդպրոցական վերահսկողությունը հետադարձ կապ է որնիրականացվում է կառավարման գործընթացում, ըստ անհրաժեշտության, և ամփոփում է մանկավարժական համակազմի գործունեության համապատասխանությունը պլանավորված աշխատանքի արդյունքներին:

### ՆԵՐԴՊՐՈՑԱԿԱՆ ՎԵՐԱՀՄԿՈՂՈՒԹՅՈՒՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ, ՁԵՎԵՐԸ, ՄԵԹՈԴՆԵՐԸ

Ժամանակակից հանրակրթական դպրոցին առաջադրված խնդիրների լուծման համար անհրաժեշտ վերահսկողությունը պետք է լինի.

Բազմանպատակ այսինքն՝ ուղղված է տարբեր հարցերի ուսումնասիրմանը (ուսումնադաստիարակչական, մեթոդական, գիտահետազոտական և փորձարարական գործունեություն, դպրոցի ուսումնանյութական բազայի կատարելագործում, սանիտարահիգիենիկ պահանջների կատարում, անվտանգությանկանոնների պահպանում և այլն),

Բազմակողմանի՝ նշանակում է միևնույն ուղղության նկատմամբ վերահսկողության տարբեր ձևերի և մեթոդների կիրառում (ֆրոնտալ, թեմատիկ, ուսուցչի գործունեության անհատական վերահսկողություն և այլն),

Բազմաստիճան՝ միևնույն ուղղության վերահսկողությունը վարչական մարմինների տարբեր մակարդակներով (ուսուցչի աշխատանքը ուսումնական հաստատությունում վերահսկում են տնօրենը, տնօրենի տեղակալները, մեթոդական միավորումների նախագահները, ԿՊԿԼՄ):

Խոսելով վերահսկողության մասին՝ անհրաժեշտ է տարբերակել վերահսկողության տեսակները, ձևերը և մեթոդները:

### ՆԴՎ ՏԵՍԱԿՆԵՐԸ

#### 1. Թեմատիկ

- Դասարանային
- Թեմատիկ
- Առարկայական

#### 2. Ֆրոնտալ

- Կոմպլեքս
- Անհատական
- Ընդհանուր

Վերահսկողության տեսակը որոշակի նպատակով իրականացվող վերահսկողության ձևերի համակցումն է: Վերահսկողության ձևերի առանձնահատկությունները բնորոշվում են նրանց ուղղությունների և առաջադրված խնդիրների յուրահատկություններով, ինչպես նաև վերահսկողության համար օգտագործվող միջոցներով:

Ուսումնական գործընթացում, ելնելով իրականացման նպատակներից, կարելի է առանձնացնել վերահսկողության երկու տեսակ՝ թեմատիկ և ֆրոնտալ:

Թեմատիկ վերահսկողությունը իրականացվում է ողջ ուսումնական տարվա ընթացքում համակողմանի ուսումնասիրման և կառավարման որակի մասին տեղեկություն ստանալու նպատակով (սովորողների գիտելիքների, կարողությունների, հմտությունների աստիճանը, ուսուցչի, դասղեկի աշխատանքի որակը, ՄՄ աշխատանքի բովանդակության համապատասխանությունը ներկայացված թեմային, ուսումնական խմբակների աշխատանքի որակը, դասերին անվտանգության կանոնների պահպանումը և այլն):

Թեմատիկ վերահսկողության արդյունքներով անցկացվում են հարցազրույցներ, խորհրդակցություններ, կատարվում են գրավոր արձանագրություններ:

Ֆրոնտալ վերահսկողությունն իրականացվում է տարին 2-3 անգամ, վերահսկվում է ողջ կատարված աշխատանքը (մեթոդական աշխատանք, ուսումնադաստիարակչական աշխատանք, արտադասարանական դաստիարակչական աշխատանք, գիտահետազոտական և փորձարարական աշխատանք և այլն) կամ ուսումնադաստիարակչական գործընթացի առանձին ուղղություններ (գուգահեռ դասարաններ, ՄՄ, ծառայություններ) միաժամանակ և համակողմանի ստուգելու նպատակով:

Այսպես, օրինակ, եթե ՄՄ ենթարկվում է ֆրոնտալ վերահսկողության, ստուգվում են նրա գործունեության բոլոր ոլորտները: Եթե ֆրոնտալ վերահսկողություն իրականացվում է որևէ ուսուցչի աշխատանքի նկատմամբ, ենթադրվում է նրա գործունեության բոլոր կողմերի ուսումնասիրում (որպես ուսուցիչ, դաստիարակ և այլն): Այսպիսի վերահսկողություն կարող է իրականացվել ուսուցչի ատեստավորման ժամանակ:

## ՆԴՎ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆ ԸՍՏ ՀԱՃԱԽԱԿԱՆՈՒԹՅԱՆ

- ԵԼԱՅԻՆ
- ՆԱԽՆԱԿԱՆ
- ԸՆԹԱՑԻԿ

▫ ՄԻՋԱՆԿՅԱԼ

▫ ԱՄՓՈՓԻՉ

Վերահսկողության ձևը վերահսկողության կազմակերպման եղանակն է: Ըստ անցկացման պարբերականության՝ վերահսկողությունը կարող է լինել՝ մուտքային (կամ ելային, իրականացվում է ուսումնական տարվա սկզբին), նախնական (ամփոփիչ ստուգողական աշխատանքներից առաջ, ավարտական դասարանների քննություններից առաջ), ընթացիկ (տարվա ընթացքում թեմաների ուսումնասիրությունից հետո, կիսամյակային ամփոփիչ աշխատանքների արդյունքները), միջանկյալ (տարեվերջին փոխադրական դասարաններում), ամփոփիչ (քննությունները ավարտական դասարաններում, տարեկան աշխատանքների արդյունքները):

Վերահսկողություն իրականացնելու նպատակով հանրակրթական ուսումնական հաստատություններում կարող են կիրառվել վերահսկողության հետևյալ ձևեր՝

- Ընդհանուր դասարանական վերահսկողություն
- Թեմատիկ վերահսկողություն
- Առարկայական վերահսկողություն
- Անհատական վերահսկողություն
- Ընդհանուր վերահսկողություն
- Կոմպլեքս (համալիր) վերահսկողություն

#### ՆԴՎ ՄԵԹՈԴՆԵՐ

▫ ԴԻՏԱՐԿՈՒՄ

▫ ՔՆՆԱՐԿՈՒՄ

▫ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՍՏՈՒԳՈՒՄ

▫ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՍՏՈՒԳՈՒՄ

▫ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

▫ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄՈՒՄ

▫ ԺԱՄԿԵՏՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ

Վերահսկողության մեթոդը առաջադրված նպատակին հասնելու համար վերահսկողության գործնական իրականացման եղանակն է: Կրթական

գործունեության ուսումնասիրման համար վերահսկողության առավել արդյունավետ մեթոդներն են՝

- Դիտարկում (ուշադիր հետևելով ինչ-որ բանի՝ ուսումնասիրել, հետազոտել),
- Վերլուծություն (պատճառների բացահայտում, զարգացման միտումների սահմանում),
- Զրույց (որևէ թեմայով գործնական խոսակցություն՝ մտքերի փոխանակմանը ունկնդիրների մասնակցությամբ),
- Փաստաթղթերի ուսումնասիրում (փաստաթղթերի հանգամանակից ուսումնասիրում՝ ծանոթանալու, ինչ-որ բան պարզաբանելու նպատակով),
- Տեղեկագրում (հարցման միջոցով հետազոտման եղանակ),
- Ժամանակացուցի սահմանում (կրկնվող գործողությունների կատարման համար ծախսված աշխատանքային ժամանակացուցի սահմանում),
- Գիտելիքների բանավոր կամ գրավոր ստուգում (սովորողների պատրաստվածության աստիճանը բացահայտելու համար):

#### ՆԴՎ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ներդրոցական վերահսկողության ուղղություններն են կրթական գործունեության հետևյալ տեսակները՝

- Ուսումնադաստիարակչական աշխատանք,
- Արտադասարանական ուսումնադաստիարակչական աշխատանք,
- Մեթոդական աշխատանք,
- Փորձարարական և գիտահետազոտական աշխատանք:

#### ՎԵՐԱՀՄԿՈՂՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉՆԵՐ

- ԿՊԿԼՄ (Կրթության պետական կառավարման լիազորված մարմին)
- Տնօրեն
- ՏՈՒԱԳՏ (տնօրենի ուսումնական աշխատանքի գծով տեղակալ)
- ՄԿԱԳՏ (մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տեղակալ)
- Առարկայական մեթոդախորհրդի նախագահ
- Հատուկ հրավիրված մասնագետ

#### ՆԴՎ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Ներդպրոցական վերահսկողությունը, լինելով շարունակական գործընթաց, իրականացվում է որոշակի շրջափուլերով և վերջին փուլը նրա արդյունքների ամփոփումն ու որոշումների ընդունումն է, քանի որ ներդպրոցական վերահսկողությունը ինքնանպատակ չէ, այլնպատակաուղղված է ուսումնադաստիարակչական գործընթացի կարգավորմանն ու կատարելագործմանը:

Այս փուլում հավաքված տեղեկատվության ամփոփումից, վերլուծությունից հետո արդյունքները քննարկվում են խորհրդակցություններում, ժողովներում կամ մեթոդափոխման նիստերում և այդ քննարկումների հիման վրա մշակվում են հանձնարարություններ , ընդունվում են որոշումներ:

Այսինքն՝ արդյունքների մշակումը, ըստ էության, լինելով վերահսկողության կոնկրետ շրջանի վերջին փուլ, միաժամանակ դառնում է հետագա աշխատանքի պլանավորման հիմք:

#### ՆԴՎ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄ

Դպրոցի ներքին վերահսկողության կարևորությունը թելադրում է նրա շարունակական զարգացում և կատարելագործում, ինչը նպատակային է իրականացնել երկու ուղղությամբ :

Առաջինը վերահսկողության աշխատանքի գիտամեթոդական մակարդակի բարձրացումն է .այն ենթադրում է, որ բոլոր այն աշխատողները, ում վստահված է վերահսկել ուսուցչի աշխատանքը, պիտի լիարժեքորեն տիրապետեն այդ վերահսկման մեթոդիկային, պիտի կարողանան զուգակցել բարձր պահանջկոտությունը և բարեկիրթ վերաբերմունքը, պիտի լինեն սկզբունքային, հետևողական և, բնականաբար, պիտի ունենան գիտամանկավարժական լայն մտահորիզոն:

#### ՆԴՎ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄ

Երկրորդ ուղղությունը վերահսկողության և ինքնավերահսկողության զուգակցումն է: Դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքի դիտարկումը, հաշվառումն ու ստուգումը վերահսկողություն է, իսկ երբ այդ նույն խնդիրների լուծման գործում մանկավարժական համակազմն է ակտիվորեն մասնակցում, ինքնավերահսկողություն է:

Ընդ որում՝ ինքնավերահսկողությունը լինում է ոչ միայն մանկավարժական համակազմի, այլև յուրաքանչյուր աշխատողի աշխատանքում: Ուսուցիչն ամեն օր պլանավորում է իր դասը, հետո վերլուծում նրա ընթացքը, վերհանում առաջացած դժվարությունները, դրանց հաղթահարման ուղիներ որոնում, այսինքն՝ ուսուցչի ամենօրյա աշխատանքը յուրօրինակ ինքնավերահսկողություն է և մեծապես

նպաստում է ուսուցման գործընթացի գիտական կազմակերպմանն ու մանկավարժական պատասխանատվության բարձրացմանը:

Կարևոր է նաև փաստել, որ հենց հմտորեն ու ճիշտ կազմակերպված ներդրոցական վերահսկողությունն է զարգացնում աշխատողի ինքնահսկողությունը:

Այսպիսով 'ուսումնադաստիարակչական գործընթացի կարևոր բաղադրիչը ' ներդրոցական վերահսկողությունը, ունի բնութագրող, վերափոխող, խթանող, ուսուցանող, զարգացնող և դաստիարակող նշանակություն, և նրա հաջող իրականացմամբ է պայմանավորված կրթական գործընթացի որակը:

## ՆԵՐԴՂՈՑԱԿԱՆ ՎԵՐԱՀՄԿՈՂՈՒԹՅԱՆ ՊԼԱՆ

	Գործունեության տեսակ, պլանավորում	Վերահսկողություն (նկարագիր)	Կատարման ժամկետ	Պատասխանատու
1.	Հանրակրթական ուսումնական հաստատություն սովորողների ընդունելության կազմակերպում	Ընդունելության կազմակերպում <a href="#">«Հանրակրթական հիմնական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություն սովորողի ընդգրկման, հաստատությունից սովորողի տեղափոխման և ազատման, ինչպես նաև սահմանված ժամկետից ուշ հանրակրթության մեջ ընդգրկվող երեխաների կրթության կազմակերպման»</a> կարգի պահանջներին համապատասխան	Օգոստոս	Տնօրեն
2.	Դասարանների կազմավորման նախագծի ներկայացում մանկավարժական խորհրդի նիստում	Դասարանների կազմավորման նախագծի ներկայացում <a href="#">«Հանրակրթական հիմնական ծրագրեր իրականացնող պետական ուսումնական հաստատության դասարանների կազմավորման»</a> կարգի պահանջներին համապատասխան	Օգոստոս	Տնօրեն



3.	Վերաքննությունների կազմակերպում և արդյունքների ներկայացում մանկավարժական խորհրդին	« <a href="#">Ուսումնական հաստատության սովորողների կողմից կրթական ծրագրերի յուրացման ամփոփիչ ստուգման կամ ատեստավորման անցկացման, սովորողների փոխադրման, ավարտման և ուսումնական տարվա քննացրում քացակայած սովորողի՝ հաջորդ դասարան կամ հանրակրթության հաջորդ աստիճան փոխադրման</a> » կարգի պահանջներին համապատասխան	Օգոստոս	ՏՈՒԱԳՏ
4.	Հանրակրթության պետական չափորոշչում կատարված փոփոխությունների ուսումնասիրություն և ներկայացում մանկավարժական խորհրդի նիստում կամ մ/մ նիստերում	Հանրակրթության պետական չափորոշչի դրույթների ապահովում	Օգոստոս	Տնօրեն, ՏՈՒԱԳՏ, Մ/Մ նախագահներ
5.	Ուսումնական պլանի դպրոցական բաղադրիչով սահմանված ժամաքանակի տնօրինման վերաբերյալ մեթոդական միավորումների առաջարկությունների ներկայացում <a href="#">մանկավարժական խորհրդի նիստում</a>	Ուսումնական պլանի դպրոցական բաղադրիչի տնօրինում	Օգոստոս	ՏՈՒԱԳՏ, Մ/Մ նախագահներ
6.	Ուսումնական պարապմունքների դասաբաշխում և դասացուցակի կազմում	Դասաբաշխում և դասացուցակի կազմում հաստատության <a href="#">սանիտարական կանոնների և նորմերին</a> » համապատասխան	Օգոստոս	ՏՈՒԱԳՏ

7.	Ուսուցիչների կողմից կազմած առարկայական թեմատիկ պլանների ստուգում և հաստատում	Առարկայական թեմատիկ պլաններում չափորոշչային պահանջների համապատասխանության ապահովում	Օգոստոս	ՏՈՒԱԳՏ, մ/մ նախագահներ, տնօրեն
8.	Առարկայական մեթոդական միավորումների տարեկան աշխատանքային պլանների ներկայացում տնօրենի հաստատմանը	Ուսումնադաստիարակչական աշխատանքների արդյունավետ կազմակերպման ապահովում	Օգոստոս	ՏՈՒԱԳՏ, մ/մ նախագահներ
9.	Նախորդ ուսումնական տարվա դասղեկական աշխատանքների արդյունքների ամփոփում, նոր ուսումնական տարվա աշխատանքների քննարկում		Օգոստոս	ՏՈՒԱԳՏ, դասղեկներ
10.	Հաստատության դասղեկների և դասվարների (տարրական դասարանների ուսուցիչ) ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանների հաստատում մանկավարժական խորհրդի նիստում		Օգոստոս	ՏՈՒԱԳՏ, տնօրեն, մանկ. խորհուրդ
11.	Դաստիարակչական աշխատանքների կազմակերպչի (ԴԱԿ) տարեկան աշխատանքային պլանի համատեղ մշակում և հաստատում մանկավարժական խորհրդի նիստում		Օգոստոս	ՏՄԿԱԳՏ, մանկ. խորհուրդ
12.	Դպրոցական բակի, դասասենյակների, կաբինետների, սանհանգույցների նախապատրաստական հիգիենիկ վիճակների ստուգում		20.08-25.08	Տնօրեն, Տնտեսվար,
13.	ԴԿՏՀ-ում տվյալների մուտքագրման վերահսկողություն		Օգոստոս-սեպտեմբեր, պարբերաբար	Տնօրեն, համ. օպերատոր

14.	ԴՇՀ-ի տվյալների մշտադիտարկում		Օգոստոս, սեպտեմբեր, ամեն ամիս	գրադարանավար
15.	Սովորողների ուսումնական ծանրաբեռնվածության կանոնակարգում	Սովորողների ուսումնական ծանրաբեռնվածության կանոնակարգում օրինակելի <a href="#">ուսումնական պլանների</a> պահանջներին և ուսումնական հաստատության համար սահմանված սանիտարական կանոններին և նորմերին համապատասխան	Սեպտեմբեր	Տնօրենի տեղակալ
16.	Սովորողների առաջադիմության նկատմամբ վերահսկողություն (ՆԴՎ), աշակերտի ընթացագրերի կազմում և տրամադրում ծնողներին	Սովորողների մոտ ձևավորված գիտելիքների, հմտությունների, դիրքորոշման, արժեքային մոտեցումների ուսումնասիրություն և դիտարկում	Հոկտեմբեր, հունվար, մարտ, հունիս	Տնօրենի տեղակալ, դասղեկներ
17.	Սովորողների վարքի նկատմամբ հսկողության իրականացում	Հաստատության կոլեգիալ կառավարման մարմնի (խորհուրդ) կողմից հաստատած ներքին կարգապահական, այդ թվում՝ աշխատողների և սովորողների վարքագծի կանոնների պահպանում	Սեպտեմբեր	Տնօրենի տեղակալ, դասղեկներ
18.	Սովորողների ուսումնական պարապմունքների մշտադիտարկում	Ուսումնական հաստատության և դասարանի մակարդակներում ուսումնական գործընթացի համակարգված հսկողության իրականացում	Սեպտեմբեր	Տնօրենի տեղակալ

19.	Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների ուսումնառության կազմակերպում և ԱՌԻՊ-ի գործողությունների քննարկում:	Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների ուսումնառության ապահովում <a href="#">անհատական ուսուցման պլանի (ԱՌԻՊ)</a> համաձայն	Սեպտեմբեր	Տնօրենի տեղակալ, ուսուցչի օգնական
20.	Հաստատության սովորողներին դասագրքերով ապահովվածության վերահսկողություն	Հաստատության սովորողներին դասագրքերով ապահովում <a href="#">«ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատությունները դասագրքերով ապահովելու և հանրակրթական առարկաների դասագրքերը հրատարակելու կարգի»</a> պահանջներին համապատասխան	Սեպտեմբեր	Տնօրենի տեղակալ, գրադարանավար
21.	Ուսուցիչների կողմից էլեկտրոնային դասամատյանների վարման մշտադիտարկում	Էլեկտրոնային դասամատյանների պատշաճ լրացման ապահովում	Սեպտեմբեր	Տնօրենի տեղակալ, էլ. կառավարման և դասավանդման ապահովման մասնագետ
22.	Դասապրոցեսի վերահսկողություն դասալսումների միջոցով	Ուսուցչի կողմից իր դասավանդած առարկայի ուսուցման և ուսումնական գործընթացում ուսուցման նոր մեթոդների և տեխնոլոգիաների ներդրման ապահովում և վերահսկում	Սեպտեմբեր	Տնօրեն, Տնօրենի տեղակալ
23.	Հաստատության սովորողների առաջին ընդհանուր ժողովի կազմակերպում և <a href="#">աշակերտական խորհրդի</a> ձևավորման նախապատրաստում		Սեպտեմբեր	Տնօրեն, Տնօրենի տեղակալ

24.	Աշակերտական խորհրդի աշխատանքների պլանավորում և վերահսկում		Մեպտեմբեր	Տնօրենի տեղակալ
25.	<a href="#">Ծնողական խորհրդի</a> (Օրինակելի կանոնադրություն «ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի, կետ 96-105) աշխատանքների պլանավորում և վերահսկում		Մեպտեմբեր	Տնօրենի տեղակալ
26.	Սովորողների համար կազմակերպված կրթական աջակցության ծառայությունների արդյունքների և խնդիրների վերաբերյալ խորհրդատվության տրամադրում դասղեկներին, դասվարներին և դաստիարակչական աշխատանքների կազմակերպչին		Մեպտեմբեր	Տնօրենի տեղակալ
27.	Կրթական գործընթացներին ծնողներին ներգրավելու ուղղությամբ աշխատանքների կազմակերպում		Մեպտեմբեր	Տնօրենի տեղակալ
28.	Տարրական դպրոցում նոր դաստիարակչական հայեցակարգի փորձարկում, իրականացում		Մեպտեմբեր, յուրաքանչյուր ամիս	Տնօրենի տեղակալ, Տարրական կրթության ՄՄ նախագահ
29.	Էլեկտրոնային մատյանների գրանցման, գնահատման, բացակայությունների հարցի քննարկում <a href="#">մանկավարժական խորհրդի նիստում</a>	Էլեկտրոնային դասամատյանների պատշաճ լրացման ապահովում	Յուրաքանչյուր ամսվա վերջին ուրբաթ օրը	Տնօրենի տեղակալ, էլ. կառ. և դաս. ապահովման մասնագետ
30.	Ուսուցիչների աշխատանքային գործունեության ստուգում՝ թեմատիկ գրավոր աշխատանքներին համապատասխան (ՆԴՎ)	Ուսումնական առարկաներից թեմատիկ գրավոր աշխատանքների բովանդակության ստուգում	Հոկտեմբեր	Տնօրենի տեղակալ
31.	Ծնողական ժողովների, խորհրդատվությունների՝ ժամանակացույցին համապատասխան իրականացումը		Ըստ ժամանակացույցի	Տնօրենի տեղակալ

32.	Ուսուցիչների հաճախումների հաշվառում, աշխատանքային կարգապահության պահպանումը	Ամեն օր	Տնօրեն, Տնօրենի տեղակալ	
33.	Հաշվապահական հաշվառման կատարումների վերահսկողություն		Տնօրեն, գլխավոր հաշվապահ	
34.	Դպրոցի սանիտարահիգիենիկ վիճակի ապահովում և վերահսկողություն		Տնօրեն, տնտեսվար,	
35.	Դպրոցի ջերմաստիճանային ռեժիմի վերահսկողություն	Ամեն օր	Տնօրեն, տնտեսվար,	
36.	Դպրոցի գրադարանի գործունեության վերահսկողություն	յուրաքանչյուր ամիս	Տնօրեն Տնօրենի տեղակալ, գրադարանավար	
37.	Հաստատության ուսուցիչների կողմից բոլոր դասերի պլանավորման առկայության մշտադիտարկում	Ուսուցիչների կողմից կազմած օրվա թեմատիկ պլանների վերահսկողություն	յուրաքանչյուր շաբաթ	Տնօրենի տեղակալ
38.	Ուսուցիչների կողմից բացթողնված դասաժամերի փոխարինում	Ուսումնադաստիարակչական անխափան գործընթացի ապահովում	Ըստ անհրաժեշտության, յուրաքանչյուր ամսվա վերջում տեղեկանքի ներկայացում	Տնօրենի տեղակալ

39.	Դասապրոցեսի վերահսկողություն դասալուսմանների միջոցով	Ուսուցչի կողմից իր դասավանդած առարկայի ուսուցման և ուսումնական գործընթացում ուսուցման նոր մեթոդների և տեխնոլոգիաների ներդրման ապահովում և վերահսկում	Հոկտեմբեր	Տնօրեն, Տնօրենի տեղակալ
40.	Սովորողների ուսումնական պարապմունքների մշտադիտարկում	Ուսումնական հաստատության և դասարանի մակարդակներում ուսումնական գործընթացի համակարգված հսկողության իրականացում	Հոկտեմբեր	Տնօրենի տեղակալ
41.	Դասղեկական ժամերի շարունակական մշտադիտարկում և դասավանդման որակի վերահսկողություն		Հոկտեմբեր	Տնօրենի տեղակալ
42.	Սոցիալապես անապահով սովորողների առողջական վիճակի դիտարկում և տվյալների հաշվառում		Հոկտեմբեր	Տնօրենի տեղակալ
43.	Արտադասարանական ուսումնական խմբակների աշխատանքների վերահսկում		յուրաքանչյուր շաբաթ	Տնօրենի տեղակալ
44.	Սովորողների համար կազմակերպված կրթական աջակցության ծառայությունների արդյունքների և խնդիրների վերաբերյալ խորհրդատվության տրամադրում դասղեկներին, դասվարներին և դաստիարակչական աշխատանքների կազմակերպչին		Հոկտեմբեր	Տնօրենի տեղակալ
45.	Կրթական գործընթացներին ծնողներին ներգրավելու ուղղությամբ աշխատանքների կազմակերպում		Հոկտեմբեր	Տնօրենի տեղակալ

46.	Սովորողների ուսումնական պարապմունքների մշտադիտարկում	Ուսումնական հաստատության և դասարանի մակարդակներում ուսումնական գործընթացի համակարգված հսկողության իրականացում	Նոյեմբեր	Տնօրեն, Տնօրենի տեղակալ
47.	Հանրակրթության պետական նոր չափորոշիչով /ՀՊՉ/ նախատեսված նախագծային աշխատանքի իրականացում 7-րդ դասարանի յուրաքանչյուր սովորողի կողմից իր ընտրած առարկայից կամ առրկաներից:	Նախագծային աշխատանքի ուսումնական գործընթացի կազմակերպման հսկողության իրականացում:	Նոյեմբեր	Տնօրենի տեղակալ, նախագծի ղեկավարներ
48.	Սովորողների առաջադիմության նկատմամբ վերահսկողություն (ՆԴՎ), առաջադիմության տեղեկագրերի տրամադրում ծնողական ժողովների ընթացքում	Սովորողների մոտ ձևավորված գիտելիքների, հմտությունների, դիրքորոշման, արժեքային մոտեցումների ուսումնասիրություն և դիտարկում	Նոյեմբեր, մարտ	Տնօրենի տեղակալ
49.	Ցածր առաջադիմություն ունեցող և արտակարգ ընդունակություններ դրսևորած սովորողներին շարունակական աջակցության տրամադրում	Ցածր առաջադիմություն ունեցող սովորողներին ընդգրկում է երկարօրյա դասերին: Ուսումնասիրում է ցածր առաջադիմությամբ սովորողների ինքնուրույն աշխատանքները դասերի ընթացքում: Արտակարգ ընդունակություններ դրսևորած սովորողներին ընդգրկում է առարկայական խմբակներում:	Նոյեմբեր	Տնօրենի տեղակալ, դասաղեններ



50.	Սովորողների վարքի նկատմամբ հսկողության իրականացում	Հաստատության կոլեգիալ կառավարման մարմնի (խորհուրդ) կողմից հաստատած ներքին կարգապահական, այդ թվում՝ աշխատողների և սովորողների վարքագծի կանոնների պահպանում	Նոյեմբեր	Տնօրենի տեղակալ, դասղեկներ
51.	Մեդիագրագիտության շաբաթվա մշտադիտարկում		Նոյեմբերի 7-14-ը	Տնօրենի տեղակալ
52.	Փոխադարձ դասալսումների մշտադիտարկում		Նոյեմբեր, յուրաքանչյուր ամիս վերջին շաբաթ	Տնօրեն, Տնօրենի տեղակալ
53.	Առարկայական օլիմպիադաների դպրոցական փուլի կազմակերպում և իրականացում		նոյեմբեր	Տնօրենի տեղակալ, մ/մ նախագահներ
54.	Միջոցառումների իրականացում՝ ըստ դաստիարակչական միջոցառումների պլանի		Ըստ ԴՄՊ-ի	Տնօրենի տեղակալ, դասղեկներ
55.	Կամավոր ատեստավորման արդյունքների ամփոփում		Հոկտեմբեր-նոյեմբեր	Տնօրեն, Տնօրենի տեղակալ
56.	Տարակարգի դիմելու ցանկություն հայտնաձև ուսուցիչների անհատական վերահսկողություն		Նոյեմբեր, ըստ մ/մ որոշման	Տնօրենի տեղակալ
57.	Պարտադիր ատեստավորման ենթակա, վերապատրաստում անցած ուսուցիչների անհատական վերահսկողության իրականացում		Նոյեմբեր, ըստ մ/մ որոշման	Տնօրեն, Տնօրենի տեղակալ

58.	Ուսուցիչների աշխատանքային գործունեության ստուգում՝ թեմատիկ գրավոր աշխատանքներին համապատասխան (ՆԴՎ)	Ուսումնական առարկաներից թեմատիկ գրավոր աշխատանքների բովանդակության ստուգում	Նոյեմբեր	Տնօրենի տեղակալ
59.	Դասապրոցեսի վերահսկողություն դասալսումների միջոցով	Ուսուցչի կողմից իր դասավանդած առարկայի ուսուցման և ուսումնական գործընթացում ուսուցման նոր մեթոդների և տեխնոլոգիաների ներդրման ապահովում և վերահսկում	Նոյեմբեր	Տնօրեն, Տնօրենի տեղակալ
60.	Հաստատության ուսուցիչների կողմից բոլոր դասերի պլանավորման առկայության մշտադիտարկում	Ուսուցիչների կողմից կազմած օրվա թեմատիկ պլանների վերահսկողություն	Նոյեմբեր	Տնօրենի տեղակալ
61.	Ուսուցիչների կողմից էլեկտրոնային դասամատյանների վարման մշտադիտարկում	Էլեկտրոնային դասամատյանների պատշաճ լրացման ապահովում	Նոյեմբեր	Տնօրենի տեղակալ, էլ. կառ. և դաս. ապահովման մասնագետ
62.	Ուսումնական աշխատանքների ընթացքի նկատմամբ հսկողություն (Ներդրոցական վերահսկողություն)	Բնագիտական առարկաների, պատմություն, հասարակագիտություն ուսումնական առարկաների դասավանդման որակի ուսումնասիրություն և սովորողների կողմից անհատական աշխատանքների կատարման վերահսկողություն	Նոյեմբեր	Տնօրենի տեղակալ
63.	Դասղեկական ժամերի վերահսկողություն դասալսումների միջոցով		Նոյեմբեր	Տնօրենի տեղակալ

64.	Դաստիարակական ժամերի շարունակական մշտադիտարկում և դասավանդման որակի վերահսկողություն	Նոյեմբեր	Տնօրենի տեղակալ	
65.	Սովորողների համար կազմակերպված կրթական աջակցության ծառայությունների արդյունքների և խնդիրների վերաբերյալ խորհրդատվության տրամադրում դասղեկներին, դասվարներին և դաստիարակչական աշխատանքների կազմակերպչին	Նոյեմբեր	Տնօրենի տեղակալ	
66.	Կրթական գործընթացներին ծնողներին ներգրավելու ուղղությամբ աշխատանքների կազմակերպում	Նոյեմբեր	Տնօրենի տեղակալ	
67.	ԱՌՆ և ՔՊ պլանների վերահսկողություն	Ըստ պլան-ժամանակացույցի	Տնօրեն, զինղեկ	
68.	Գրությունների և հանձնարարականներիչ կատարման վերահսկողություն	Ամեն օր	Տնօրեն, էլ. կառ. և դաս. ապահ. մասնագետ	
69.	Առարկայական մեթոդական միավորումների աշխատանքների վերահսկողություն (վերլուծություն)	Մեթոդական միավորումների աշխատանքների հսկողություն, ըստ մեթոդական միավորումների կիսամյակային և տարեկան աշխատանքային պլանների	Դեկտեմբեր	Տնօրենի տեղակալ
70.	Տնօրենի տեղակալների, մեթոդական միավորումների նախագահների, դասղեկների, ուսուցչի օգնականների աշխատանքների քննարկում <a href="#">մանկավարժական խորհրդի նիստում</a>	Տնօրենի տեղակալների, մեթոդական միավորումների նախագահների, դասղեկների, ուսուցչի օգնականների աշխատանքների արդյունավետության վերլուծություն ներկայացված հաշվետվությունների հիման վրա (զեկուցող՝ տնօրենի ուսումնական աշխատանքի	Դեկտեմբեր	Տնօրենի տեղակալ

		գծով, ՄԿԱ գծով տեղակալ		
71.	Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների ուսումնառության արդյունքների ամփոփիչ գնահատում	Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների ուսումնառության արդյունքների ամփոփիչ գնահատում անհատական ուսուցման պլանի (ԱՌԻՊ) համաձայն	Դեկտեմբեր	Տնօրենի տեղակալ, ուսուցչի օգնական
72.	Առարկայական օլիմպիադաների դպրոցական փուլի արդյունքների ամփոփում և հաջորդ փուլի նախապատրաստման աշխատանքների իրազեկում <a href="#">մանկավարժական խորհրդի նիստում</a>	Առարկայական օլիմպիադաների հաջորդ փուլ անցած սովորողների անվանացանկի հաստատում (զեկուցող՝ տնօրենի՝ ուսումնական աշխատանքի գծով տեղակալ)	Դեկտեմբեր	Տնօրենի տեղակալ, մ/մ նախագահներ
73.	Հաստատության ուսուցիչների կողմից բոլոր դասերի պլանավորման առկայության մշտադիտարկում	Ուսուցիչների կողմից կազմած օրվա թեմատիկ պլանների վերահսկողություն	Դեկտեմբեր	Տնօրենի տեղակալ
74.	Սովորողների ուսումնական պարապմունքների մշտադիտարկում	Ուսումնական հաստատության և դասարանի մակարդակներում ուսումնական գործընթացի համակարգված հսկողության իրականացում	Դեկտեմբեր	Տնօրենի տեղակալ

75.	Դասապրոցեսի վերահսկողություն դասալսումների միջոցով	Ուսուցչի կողմից իր դասավանդած առարկայի ուսուցման և ուսումնական գործընթացում ուսուցման նոր մեթոդների և տեխնոլոգիաների ներդրման ապահովում և վերահսկում	Դեկտեմբեր	Տնօրեն, Տնօրենի տեղակալ
76.	Ուսուցիչների կողմից էլեկտրոնային դասամատյանների վարման մշտադիտարկում	Էլեկտրոնային դասամատյանների պատշաճ լրացման ապահովում	Դեկտեմբեր	Տնօրենի տեղակալ, էլ. կառ. և դաս. ապահովման մասնագետ
77.	2023-2024 ուսումնական տարվա առաջին կիսամյակի ընթացքում կատարված ուսումնադաստիարակչական աշխատանքների և սովորողների առաջադիմության արդյունքների ամփոփում <a href="#">մանկավարժական խորհրդի նիստում</a>	Առաջին կիսամյակում սովորողների առաջադիմության արդյունքների վերլուծություն	Դեկտեմբեր	Տնօրենի տեղակալ
78.	Ուսումնական խմբակների աշխատանքների կիսամյակային հաշվետվության վերլուծություն		Դեկտեմբեր	Տնօրենի տեղակալ
79.	2023-2024 ուսումնական տարվա առաջին կիսամյակի ընթացքում աշակերտական խորհրդի գործունեության վերլուծություն		Դեկտեմբեր	Տնօրենի տեղակալ
80.	2023-2024 ուսումնական տարվա առաջին կիսամյակի ընթացքում ծնողական խորհրդի գործունեության վերլուծություն		Դեկտեմբեր	Տնօրենի տեղակալ
81.	Սովորողների համար կազմակերպված կրթական աջակցության ծառայությունների արդյունքների և խնդիրների վերաբերյալ խորհրդատվության տրամադրում դասղեկներին, դասվարներին և դաստիարակչական աշխատանքների կազմակերպչին		Դեկտեմբեր	Տնօրենի տեղակալ

82.	2023-2024 ուսումնական տարվա առաջին կիսամյակի ընթացքում կատարված ուսումնադաստիարակչական աշխատանքների վերլուծություն և ամփոփում	Դեկտեմբեր	Տնօրեն, Տնօրենի տեղակալ	
83.	Առաջին կիսամյակի ուսումնադաստիարակչական աշխատանքների ամփոփում <a href="#">մանկավարժական խորհրդի նիստում</a>	Առաջին կիսամյակի ուսումնադաստիարակչական աշխատանքների արդյունքների ամփոփում (զեկուցող՝ տնօրեն, տնօրենի տեղակալ)	Հունվար	Տնօրեն, Տնօրենի տեղակալ
84.	Երկրորդ կիսամյակի ուսումնական պլանի քննարկում <a href="#">մանկավարժական խորհրդի նիստում</a> և ներկայացում տնօրենի հաստատմանը	Երկրորդ կիսամյակի ուսումնական պլանի քննարկում և հաստատում (զեկուցող՝ տնօրեն, տնօրենի տեղակալ)	Հունվար	Տնօրեն, Տնօրենի տեղակալ
85.	Երկրորդ կիսամյակի դասաբաշխում և ուսումնական պարապմունքների դասացուցակի կազմում	Դասաբաշխում և դասացուցակի կազմում հաստատության <a href="#">սանիտարական կանոններին և նորմերին</a> համապատասխան	Հունվար	Տնօրենի տեղակալ
86.	<a href="#">Ցածր առաջադիմություն ունեցող սովորողների հետ իրականացվող աշխատանքների պլանավորում</a>	Շարունակական աջակցության տրամադրում ցածր առաջադիմություն ունեցող սովորողներին	Հունվար	Տնօրենի տեղակալ, դասղեկներ
87.	Ուսուցիչների աշխատանքային գործունեության վերահսկողություն(ՆԴՎ)	Ուսումնական առարկաներից թեմատիկ գրավոր աշխատանքների բովանդակության վերահսկողություն	Հունվար	Տնօրենի տեղակալ

88.	Սովորողների առաջադիմության նկատմամբ վերահսկողություն (ՆԴՎ)	Սովորողների մոտ ձևավորված գիտելիքների, հմտությունների, դիրքորոշման, արժեքային մոտեցումների ուսումնասիրություն և դիտարկում	Հունվար	Տնօրենի տեղակալ
89.	Ցածր առաջադիմություն ունեցող և արտակարգ ընդունակություններ դրսևորած սովորողներին շարունակական աջակցության տրամադրում	Ուսումնասիրում է ցածր առաջադիմությամբ սովորողների ինքնուրույն աշխատանքները դասերի ընթացքում, Արտակարգ ընդունակություններ դրսևորած սովորողներին ընդգրկում է առարկայական խմբակներում	Հունվար	Տնօրենի տեղակալ
90.	Սովորողների վարքի նկատմամբ հսկողության իրականացում	Հաստատության կոլեգիալ կառավարման մարմնի (խորհուրդ) կողմից հաստատած ներքին կարգապահական, այդ թվում՝ աշխատողների և սովորողների վարքագծի կանոնների պահպանում	Հունվար	Տնօրենի տեղակալ, դասղեկներ
91.	Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների ուսումնառության կազմակերպում և <a href="#">ԱՌԻՊ-ով նախատեսված գործողությունների ուսումնասիրում և արդյունավետության գնահատում</a>	Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների ուսումնառության ապահովում անհատական ուսուցման պլանի (ԱՌԻՊ) համաձայն	Հունվար	Տնօրենի տեղակալ
92.	Ուսումնադաստիարակչական գործընթացի նկատմամբ վերահսկողություն (Ներդպրոցական վերահսկողություն)	Ուսումնական առարկաների ուսուցման որակի ուսումնասիրություն և սովորողների կողմից ինքնուրույն աշխատանքների կատարման վերահսկողություն	Հունվար	Տնօրենի տեղակալ

93.	2023-2024 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի համար նախատեսված ուսումնադաստիարակչական աշխատանքների քննարկում և կազմակերպում		Հունվար	Տնօրեն, Տնօրենի տեղակալ
94.	2023-2024 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի համար դասղեկների, դասվարների և դաստիարակչական աշխատանքների կազմակերպչի նախատեսված աշխատանքային գործունեության քննարկում և պլանավորում		Հունվար	Տնօրենի տեղակալ
95.	2023-2024 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակում արտադասարանական ուսումնական խմբակների աշխատանքային գործունեության պլանավորում		Հունվար	Տնօրենի տեղակալ
96.	Մոցիալապես անապահով սովորողների առողջական վիճակի դիտարկում և տվյալների հաշվառում		Հունվար	Տնօրենի տեղակալ
97.	Ուսուցիչների կողմից էլեկտրոնային դասամատյանների վարում	<a href="https://matyan.emis.am/#/login">https://matyan.emis.am/#/login</a> կայքում ուսուցիչների կողմից աշխատանքների պարտաճանաչ կատարման ապահովում	Փետրվար	Տնօրենի տեղակալ, էլ. կառ. և դաս. ապահովման մասնագետ
98.	Ուսուցիչների կողմից բացթողնված դասաժամերի փոխարինում	Ուսումնադաստիարակչական անխափան գործընթացի ապահովում	Փետրվար	Տնօրենի տեղակալ
99.	Հանրակրթության պետական նոր չափորոշիչով /ՀՊԶ/ նախատեսված նախագծային աշխատանքի իրականացում 7-րդ դասարանի յուրաքանչյուր սովորողի կողմից իր ընտրած առարկայից կամ առրկաներից:	Նախագծային աշխատանքի ուսումնական գործընթացի կազմակերպման հսկողության իրականացում:	Նոյեմբեր	Տնօրենի տեղակալ, նախագծի ղեկավարներ
100.	Հաստատության ուսուցիչների կողմից բոլոր դասերի պլանավորման առկայության մշտադիտարկում	Ուսուցիչների կողմից կազմած օրվա թեմատիկ պլանների վերահսկողություն	Փետրվար	Տնօրենի տեղակալ



101.	Սովորողների առաջադիմության նկատմամբ վերահսկողություն (ՆԴՎ)	Սովորողների մոտ ձևավորված գիտելիքների, հմտությունների, դիրքորոշման, արժեքային մոտեցումների ուսումնասիրություն և դիտարկում	Փետրվար	Տնօրենի տեղակալ
102.	Սովորողների վարքի նկատմամբ հսկողության իրականացում	Հաստատության կոլեգիալ կառավարման մարմնի (խորհուրդ) կողմից հաստատած ներքին կարգապահական, այդ թվում՝ աշխատողների և սովորողների վարքագծի կանոնների պահպանում	Փետրվար	Տնօրենի տեղակալ
103.	Սովորողների ուսումնական պարապմունքների մշտադիտարկում	Ուսումնական հաստատության և դասարանի մակարդակներում ուսումնական գործընթացի համակարգված հսկողության իրականացում	Փետրվար	Տնօրենի տեղակալ
104.	Ուսուցիչների կողմից էլեկտրոնային դասամատյանների վարման մշտադիտարկում	Էլեկտրոնային դասամատյանների պատշաճ լրացման ապահովում	Փետրվար	Տնօրենի տեղակալ, Էլ. կառ. և դաս. ապահովման մասնագետ

105.	Ուսումնադաստիարակչական աշխատանքների վիճակի մասին հաշվետվությունների կազմում և ներկայացում մանկավարժական խորհրդի նիստում	Հաշվետվությունների կազմում ուսումնադաստիարակչական աշխատանքների՝ մասնավորապես սովորողների առաջադիմության և ուսուցիչների մասնագիտական զարգացման վերաբերյալ՝ հիմնվելով մեթոդական միավորումների և ուսուցիչների ներկայացրած հաշվետվությունների, եզրակացությունների հիման վրա	Փետրվար	Տնօրենի տեղակալ
106.	Դասապրոցեսի վերահսկողություն դասալսումների միջոցով	Ուսուցչի կողմից իր դասավանդած առարկայի ուսուցման և ուսումնական գործընթացում ուսուցման նոր մեթոդների ու տեխնոլոգիաների ներդրման ապահովում, վերահսկում	Փետրվար	Տնօրեն, Տնօրենի տեղակալ
107.	2023-2024 ուստարվա շրջանավարտների ավարտական, կենտրոնացված ավարտական և պետական ավարտական քննությունների նախապատրաստման աշխատանքների քննարկում <a href="#">մանկավարժական խորհրդի նիստում</a>	Սովորողների համար ավարտական, կենտրոնացված ավարտական և պետական ավարտական քննությունների պատշաճ կազմակերպման ապահովում	Փետրվար	Տնօրեն, Տնօրենի տեղակալ
108.	Դասղեկական ժամերի վերահսկողություն դասալսումների միջոցով		Փետրվար	Տնօրենի տեղակալ
109.	Դասղեկական ժամերի շարունակական մշտադիտարկում նախապատրաստման և նորակազմի վերահսկողություն		Փետրվար	Տնօրենի տեղակալ
110.	Կրթական գործընթացների ծնողներին ներգրավելու ուղղությամբ աշխատանքների կազմակերպում		Փետրվար	Տնօրենի տեղակալ

111.	Սովորողների համար կազմակերպված կրթական աջակցության ծառայությունների արդյունքների խնդիրների վերաբերյալ խորհրդատվության տրամադրում դասղեկներին, դասվարներին և դաստիարակչական աշխատանքների կազմակերպչին	Փետրվար	Տնօրենի տեղակալ	
112.	Ազգային մշակութային ժառանգության պահպանմանն ու զարգացմանն ուղղված միջոցառումների կազմակերպում	Ուսումնական տարվա ընթացքում	Տնօրենի տեղակալ, դասղեկներ, ուսուցիչներ	
113.	Հաստատության նյութատեխնիկական բազայի զարգացմանն ուղղված աշխատանքների իրականացում	Ուսումնական տարվա ընթացքում	Տնտեսվար	
114.	2023-2024 ուստարվա շրջանավարտների պետական ավարտական, միասնական և կենտրոնացված քննությունների նախապատրաստման հետ կապված հարցերի քննարկում <a href="#">մանկավարժական խորհրդի նիստում</a>	Սովորողների կողմից ընտրված պետական ավարտական քննական առարկաների ցանկի իրազեկում (զեկուցող՝ տնօրեն, տնօրենի տեղակալ)	Մարտ	Տնօրեն, Տնօրենի տեղակալ
115.	Ուսումնական աշխատանքների ընթացքի նկատմամբ հսկողություն (Ներդրոցական վերահսկողություն)	Հումանիտար՝ «Ռուսաց լեզու», «Հայոց լեզու և գրականություն», «Պատմություն», «Հասարակագիտություն», «ՀԵՊ», բնագիտական՝ «Կենսաբանություն» «Քիմիա», «Աշխարհագրություն», «Ֆիզիկա», «Մաթեմատիկա» ուսումնական առարկաների ուսուցման որակի ուսումնասիրություն, Սովորողների կողմից անհատական աշխատանքների կատարման վերահսկողություն	Մարտ	Տնօրենի տեղակալ

116.	Սովորողների ուսումնական պարապմունքների մշտադիտարկում	Ուսումնական հաստատության և դասարանի մակարդակներում ուսումնական գործընթացի համակարգված հսկողության իրականացում	Մարտ	Տնօրենի տեղակալ
117.	<a href="#">Սովորողների վարքի</a> նկատմամբ հսկողության իրականացում	Հաստատության կոլեգիալ կառավարման մարմնի (խորհուրդ) կողմից հաստատած ներքին կարգապահական, այդ թվում՝ աշխատողների և սովորողների վարքագծի կանոնների պահպանում	Մարտ	Տնօրեն, Տնօրենի տեղակալ
118.	<a href="#">Ուսման մեջ ցածր առաջադիմություն ունեցող սովորողների բացահայտում և նրանց կրթական կարիքների գնահատում</a>	Իրականացնում է ցածր առաջադիմություն ունեցող սովորողների կրթական խնդիրների միասնական պահանջների ապահովման վերահսկողություն, Պարբերաբար ստուգում է դասարանի (տվյալ ուսումնական առարկայի) մատյանը և ըստ թեմաների ստացած գնահատականների արձանագրում ցածր առաջադիմություն ունեցող սովորողների անունները, Իրականացնում է վերոնշյալ սովորողների ուսման որակի գրավոր ստուգում, Ներկայացնում է ցածր առաջադիմություն ունեցող սովորողների համար կրթական աջակցության ծառայությունների	Մարտ	Տնօրենի տեղակալ

		պլանը		
119.	Էլեկտրոնային մատյանների գրանցման, գնահատման, բացակայությունների հարցի քննարկում <a href="#">մանկավարժական խորհրդի նիստում</a>	<a href="#">Էլեկտրոնային դասամատյանների</a> պատշաճ լրացման ապահովում	Մարտ	Տնօրենի տեղակալ, էլ. կառ. և դաս. ապահովման մասնագետ
120.	Ուսման մեջ սովորողների առաջադիմության արդյունքների ամփոփում <a href="#">մանկավարժական խորհրդի նիստում</a>	Հաշվետվությունների կազմում ուսումնադաստիարակչական աշխատանքների՝ մասնավորապես սովորողների առաջադիմության և ուսուցիչների մասնագիտական զարգացման վերաբերյալ՝ հիմնվելով մեթոդական միավորումների և ուսուցիչների ներկայացրած հաշվետվությունների, եզրակացությունների հիման վրա	Մարտ	Տնօրենի տեղակալ
121.	Ուսուցիչների աշխատանքային գործունեության մշտադիտարկում՝ թեմատիկ գրավոր աշխատանքներին համապատասխան (ՆԴՎ)	Ուսումնական առարկաներից թեմատիկ գրավոր աշխատանքների բովանդակության ստուգում	Մարտ	Տնօրեն, Տնօրենի տեղակալ

122.	Դասապրոցեսի վերահսկողություն դասալսումների միջոցով	<a href="#">Թեմատիկ, գուգահեռ և համալիր դասալսումների</a> պարբերաբար իրականացում՝ սովորողների ուսումնառությունը և առաջադիմությունը դիտարկելու նպատակով	Մարտ	Տնօրեն, Տնօրենի տեղակալ
123.	Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների ուսումնառության կազմակերպում և ԱՌԻՊ-ի գործողությունների քննարկում:	Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների ուսումնառության ապահովում անհատական ուսուցման պլանի (ԱՌԻՊ) համաձայն	Մարտ	Տնօրենի տեղակալ
124.	Արտադպրոցական և արտադասարանական միջոցառումների պլանավորում և կազմակերպում		Մարտ	Տնօրենի տեղակալ
125.	Դասղեկական ժամերի շարունակական մշտադիտարկում և դասավանդման որակի վերահսկողություն		Մարտ	Տնօրենի տեղակալ
126.	Խորհրդակցությունների կազմակերպում հանրակրթական ուսումնական հաստատության ծնողական և աշակերտական խորհուրդների հետ		Մարտ	Տնօրենի տեղակալ
127.	2023-2024 ուստարվա շրջանավարտների ավարտական քննությունների նախապատրաստման աշխատանքներ	Ուսումնասիրությունների իրականացում քննական առարկաներից սովորողների առաջադիմության վերաբերյալ	Ապրիլ	Տնօրեն, Տնօրենի տեղակալ

128.	Ուսումնական աշխատանքների ընթացքի նկատմամբ հսկողություն (Ներդպրոցական վերահսկողություն)	Բնագիտական՝ «Կենսաբանություն» «Քիմիա», «Աշխարհագրություն», «Ֆիզիկա», «Մաթեմատիկա» և հումանիտար՝ «Հայոց լեզու և գրականություն», «Պատմություն», «Հասարակագիտություն», «ՀԵՊ», «Օտար լեզուներ» ուսումնական առարկաների ուսուցման որակի ուսումնասիրություն, Սովորողների կողմից անհատական աշխատանքների կատարման վերահսկողություն	Ապրիլ	Տնօրենի տեղակալ
129.	<a href="#">Սովորողների վարքի</a> նկատմամբ հսկողության իրականացում	Հաստատության կոլեգիալ կառավարման մարմնի (խորհուրդ) կողմից հաստատած ներքին կարգապահական, այդ թվում՝ աշխատողների և սովորողների վարքագծի կանոնների պահպանում	Ապրիլ	Տնօրենի տեղակալ, դասղեկներ
130.	Ուսումնական գործընթացի վերահսկողություն	Ուսուցիչների մասնագիտական զարգացման միջոցառումների արդյունավետության վերակսկողություն Հաստատության սովորողների կրթական կարիքներին ուղղված աշխատանքների վերահսկողություն	Ապրիլ	Տնօրենի տեղակալ

131.	Դասապրոցեսի վերահսկողություն դասալսումների միջոցով	<a href="#">Թեմատիկ, գուգահեռ և համալիր դասալսումների</a> պարբերաբար իրականացում՝ սովորողների ուսումնառությունը և առաջադիմությունը դիտարկելու նպատակով	Ապրիլ	Տնօրեն, Տնօրենի տեղակալ
132.	Առարկայական մեթոդական միավորումների աշխատանքների վերահսկողություն	Մեթոդական միավորումների աշխատանքների հսկողություն, ըստ մեթոդական միավորումների կիսամյակային և տարեկան աշխատանքային պլանների	Ապրիլ	Տնօրեն, Տնօրենի տեղակալ
133.	Առարկայական օլիմպիադայի մարզային, հանրապետական փուլի ամփոփում	Մեթոդական միավորումների կողմից տրված վերլուծությունների հիման վրա առարկայական օլիմպիադայի հանրապետական փուլին սովորողների մասնակցության արդյունքների ամփոփում մանկավարժական խորհրդի նիստում	Ապրիլ	Տնօրենի տեղակալ
134.	Դասղեկական ժամերի վերահսկողություն դասալսումների միջոցով		Ապրիլ	Տնօրենի տեղակալ
135.	Դասղեկների և դասվարների ուսումնական գործունեության մեջ տեղ գտած թերությունների ուսումնասիրում և բացահայտում		Ապրիլ	Տնօրենի տեղակալ



136.	2023-2024 ուսումնական տարվա ընթացքում 2-9-րդ դասարաններում 120 -200 ժամ բացակա ունեցող սովորողների քննական արդյունքների ամփոփում <a href="#">մանկավարժական խորհրդի նիստում</a>	Հաշվետվության ներկայացում 120 - 200 ժամ բացակա ունեցող սովորողների քննական արդյունքների վերաբերյալ	Մայիս	Տնօրեն, Տնօրենի տեղակալ
137.	Քննությունների կազմակերպման աշխատակարգի ներկայացում և քննական հանձնաժողովների կազմի հաստատում <a href="#">մանկավարժական խորհրդի նիստում</a>	<a href="#">Քննությունների կազմակերպում և վերահսկում «Ուսումնական հաստատության սովորողների կողմից կրթական ծրագրերի յուրացման, ամփոփիչ ստուգման կամ ատեստավորման անցկացման, սովորողների փոխադրման, ավարտման և ուսումնական տարվա ընթացքում բացակայած սովորողի հաջորդ դասարան կամ հանրակրթության հաջորդ աստիճան փոխադրման կարգի» դրույթներին համապատասխան</a>	Մայիս	Տնօրեն, Տնօրենի տեղակալ
138.	Ուսումնադաստիարակչական աշխատանքների վիճակի մասին հաշվետվությունների կազմում և ներկայացում մանկավարժական խորհրդի նիստում	Հաշվետվությունների կազմում ուսումնադաստիարակչական աշխատանքների՝ մասնավորապես սովորողների առաջադիմության և ուսուցիչների մասնագիտական զարգացման վերաբերյալ՝ հիմնվելով մեթոդական միավորումների և ուսուցիչների ներկայացրած հաշվետվությունների, եզրակացությունների հիման վրա	Մայիս	Տնօրենի տեղակալ, դասղեկներ, ուսուցիչներ, զինղեկ, գրադարանավար,

139.	Ուսուցիչների կողմից էլեկտրոնային դասամատյանների վարման վերահսկողություն	<a href="https://matyan.emis.am/#/login">https://matyan.emis.am/#/login</a> կայքում ուսուցիչների կողմից աշխատանքների պարտաճանաչ կատարման ապահովում	Մայիս	Տնօրենի տեղակալ, էլ. կառ. և դաս. ապահովման մասնագետ
140.	<a href="#">Սովորողների վարքի</a> նկատմամբ հսկողության իրականացում	Հաստատության կոլեգիալ կառավարման մարմնի (խորհուրդ) կողմից հաստատած ներքին կարգապահական, այդ թվում՝ աշխատողների և սովորողների վարքագծի կանոնների պահպանում	Մայիս	Տնօրենի տեղակալ, դասղեկներ
141.	Մանկավարժական աշխատանքի առաջավոր փորձի ընդհանրացում և տարածում	Մանկավարժական աշխատանքի առաջավոր փորձի բովանդակային և մեթոդաբանական հարցերի համակարգում և տեղայնացում	Մայիս	Տնօրենի տեղակալ, մ/մ նախագահներ
142.	Սովորողների համար կազմակերպված կրթական աջակցության ծառայությունների արդյունքների և խնդիրների վերաբերյալ խորհրդատվության տրամադրում դասղեկներին, դասավարներին և դաստիարակչական աշխատանքների կազմակերպչին		Մայիս	Տնօրենի տեղակալ, մ/մ նախագահներ
143.	Հայ ազգի հաղթանակներին նվիրված միջոցառումների կազմակերպում		Մայիս	Տնօրենի տեղակալ, դասղեկներ
144.	Դասղեկների և դասավարների աշխատանքի առաջավոր փորձի ընդհանրացում և տարածում		Մայիս	Տնօրենի տեղակալ, մ/մ նախագահներ
145.	Դասղեկական ժամերի շարունակական մշտադիտարկում և դասավանդման որակի վերահսկողություն		Մայիս	Տնօրենի տեղակալ

146.	2023-2024 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական գործընթացի ամփոփում Հանրակրթության պետական չափորոշչի պահանջներին համապատասխան	Սովորողների մոտ ձևավորված գիտելիքների, հմտությունների, դիրքորոշման, արժեքային համակարգի ուսումնասիրություն, վերլուծություն և ամփոփում	Հունիս	Տնօրեն, Տնօրենի տեղակալ
147.	2023-2024 ուսումնական տարվա ընթացքում սովորողների՝ երկրորդ կիսամյակի և տարեկան առաջադիմության արդյունքների ամփոփման, հաստատությունից տեղափոխման, ազատման և հանրակրթության մեջ ընդգրկման հարցի քննարկում <a href="#">մանկավարժական խորհրդի նիստում</a> (գեկուցող՝ տնօրենի տեղակալ)		Հունիս	Տնօրեն, Տնօրենի տեղակալ
148.	Ավարտական, կենտրոնացված ավարտական և պետական ավարտական քննությունների արդյունքների ամփոփում և ուսումնական տարվա ընթացքում կատարված ուսումնադաստիարակչական աշխատանքների վերաբերյալ հաշվետվության ներկայացում <a href="#">մանկավարժական խորհրդի նիստում</a>		Հունիս	Տնօրեն, Տնօրենի տեղակալ
149.	Ուսումնական տարվա ընթացքում կատարված ուսումնադաստիարակչական աշխատանքների վերլուծություն և ամփոփում		Հունիս	Տնօրեն, Տնօրենի տեղակալ